ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ!

Էլեկտրոնային գողության զո՞հ եք: Արդյո՞ք գողացվել են Ձեր CalFresh սննդի նպաստները 10/1/2022-ից մինչև 11/30/2023-ն ընկած ժամանակահատվածում:

Պարզեք, թե ինչպես կարող եք իրավասու լինել սննդի նպաստների փոխհատուցման համար, զանգահարելով՝ 1-877-847-3663 (FOOD):

CalFresh FOOD

ԿԱՐԵՎՈՐ Է!

Արդյո՞ք Ձեր սննդի նպաստները էլեկտրոնային եղանակով գողացվել են 10/1/2022-ից մինչև 11/30/2023-ն ընկած ժամանակահատվածում:

Եթե այո, Դուք կարող եք իրավասու լինել CalFresh նպաստների փոխարինման համար: Իմացեք, արդյոք Դուք համապատասխանում եք, զանգահարելով՝ 1-877-847-3663 (FOOD) այսօր!

CalFresh FOOD

CalFresh-ի ահազանգ. 10/1/2022-ից - 11/30/2023-ն ընկած ժամանակահատվածում էլեկտրոնային եղանակով գողացված CalFresh նպաստների փոխհատուցում: Հաճախակի Տրվող Հարցեր

Թարմացվել է՝ 11/21/2023

1. **Ինչպե՞ս կարող եմ իմանալ, թե արդյոք էլեկտրոնային գողություն է կատարվել:**
   Էլեկտրոնային գողությունն այն է, երբ Ձեր CalFresh-ի նպաստները գողանում են կամ հանվում են Ձեր քարտից՝ խաբեության, կլոնավորման, պատճենահանման կամ նմանատիպ խարդախության մեթոդներով: Եթե Դուք փորձում եք սնունդ գնել և նկատում եք, որ Ձեր մնացորդը զրոյական է կամ ավելի քիչ, քան նախկինում ունեցել եք Ձեր վերջին գնումից հետո, և Դուք չեք կորցրել Ձեր ֆիզիկական քարտը, հնարավոր է, որ Դուք ենթարկվել եք էլեկտրոնային գողության:

2. **Ովքե՞ր կարող են 2022 թվ.-ի հոկտեմբերի 1-ից մինչև 2023 թվ.-ի նոյեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածի համար էլեկտրոնային եղանակով գողացված CalFresh-ի փոխարինման նպաստներ ստանալ:** Եթե Ձեր CalFresh նպաստները գողացվել են էլեկտրոնային եղանակով 2022 թվ.-ի հոկտեմբերի 1-ից մինչև 2023 թվ.-ի նոյեմբերի 30-ն, ապա Դուք կարող եք իրավասու լինել փոխարինելու Ձեր CalFresh նպաստները: Էլեկտրոնային գողությունը կարող է տեղի ունենալ քարտի անհետացման, կլոնավորման, խաբեության և նմանատիպ խարդախ մեթոդների միջոցով: Կանոնները փոխվել են. Դուք կարող եք իրավասու լինել, նույնիսկ եթե նախկինում Ձեզ մերժել են փոխարինման նպաստները, ստացել եք արդեն մասնակի փոխարինման նպաստներ կամ երբեք չեք ներկայացրել էլեկտրոնային գողության հայց:

3. **Ինչպե՞ս կարող եմ էլեկտրոնային գողության հայց ներկայացնել (EBT 2259):**
   Դուք կարող եք անձամբ գնալ Ձեր վարչաշրջանի Սոցիալական ծառայությունների գրասենյակ, կամ կարող եք զանգահարել՝ 1-877-847-3663 հեռախոսահամարով: Դուք կարող եք նաև ստանալ EBT 2259 ձևը և լրացնել այն ներբեռնելով՝ BenefitsCal-ում, եթե հաշիվ չունեք: Եթե օգնության կարիք ունեք, կարող եք նշանակել լիազոր ներկայացուցիչ, ով կօգնի Ձեզ կապված Ձեր գործի հետ:

4. **Ինչպե՞ս կարող եմ գողության պատճառով CalFresh նպաստների փոխհատուցում ստանալ 2022 թվ.-ի հոկտեմբերի 1-ից մինչև 2023 թվ.-ի նոյեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածի համար:**
   Դուք պետք է հայց ներկայացնեք, եթե Ձեր CalFresh նպաստները գողացվել են էլեկտրոնային եղանակով 2022 թվ.-ի հոկտեմբերի 1-ից մինչև 2023 թվ.-ի նոյեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում: Այս ժամանակահատվածում CalFresh նպաստների փոխարինման հայց ներկայացնելու համար՝ Դուք պետք է լրացնեք Էլեկտրոնային գողության հաշվետվության (EBT 2259) ձևը՝ նշելով «հետադարձ պահանջ» վանդակը, և այն ներկայացնեք ոչ ուշ, քան 2024 թվ.-ի փետրվարի 29-ը:

CalFresh-ի ահազանգ. 10/1/2022-ից - 11/30/2023-ն ընկած ժամանակահատվածում էլեկտրոնային եղանակով գողացված CalFresh նպաստների փոխհատուցում: Հաճախակի Տրվող Հարցեր

Թարմացվել է՝ 11/21/2023

Տե՛ս հարցը #3-ը, թե ինչպես ներկայացնել ձևը: Եթե հաստատվի, Դուք կստանաք փոխարինման նպաստներ EBT 2259 ձևը ներկայացնելու օրվանից սկսած 30 աշխատանքային օրվա ընթացքում:

5. **Արդյո՞ք, կկարողանամ հետ ստանալ էլեկտրոնային եղանակով գողացված իմ բոլոր CalFresh նպաստները:**
   Էլեկտրոնային գողության յուրաքանչյուր հաշվելի փոխարինման համար տնային տնտեսությունները իրավասու են ստանալ մինչև երկու ամսվա սննդի նպաստ: Փոխարինված գումարը կլինի էլեկտրոնային եղանակով գողացված նպաստների գումարը, եթե գողության պահին այն երկու անգամ պակաս է Ձեր ամսական նպաստից: Դուք չեք կարող փոխարինումներ ստանալ այդ նպաստի կրկնապատիկից ավելին: Օրինակ, եթե գողության պահին Ձեր ամսական նպաստը կազմում էր $200, ապա Ձեր առավելագույն փոխհատուցումը կլինի $400: Եթե գողացել են $300, ապա հետ կստանաք $300: Եթե գողացել են $600, ապա Ձեզ կարող են փոխհատուցել $400:
   Այն տնային տնտեսությունները, որոնց նպաստները էլեկտրոնային եղանակով գողացվել են, կարող են դաշնային ֆինանսական տարվա ընթացքում մինչև երկու անգամ CalFresh նպաստների փոխհատուցում ստանալ (հոկտեմբերի 1-ից մինչև սեպտեմբերի 30-ը):

6. **Ինչպե՞ս կարող եմ իմ փոխարինման նպաստները ստանալ:**
   Երբ Դուք առաջին անգամ զեկուցեք CalFresh-ի գողության մասին, վարչաշրջանը կամ EBT Հաճախորդների սպասարկման ներկայացուցիչը կդադարեցնի Ձեր ընթացիկ քարտի ակտիվությունը և Ձեզ նոր EBT քարտ կուղարկի: Եթե Դուք այլևս չունեք EBT քարտ, վարչաշրջանը կամ EBT հաճախորդների սպասարկման ներկայացուցիչը Ձեզ կուղարկի նոր EBT քարտ: Տեղեկացրեք վարչաշրջանին, եթե ուղարկելու փոխարեն Դուք ինքներդ եք ուզում վերցնել քարտը վարչաշրջանից: Ձեր PIN կոդը չի փոխվի, և Ձեր քարտը կարող է ակտիվացվել պարզապես սննդի հետ կապված գործարքներ կատարելու համար:

7. **Եթե ես այլևս չեմ ստանում CalFresh նպաստներ, արդյո՞ք ես իրավասու եմ փոխարինող նպաստներ ստանալու համար:**
   Նույնիսկ, եթե Դուք այլևս չեք ստանում CalFresh նպաստներ, Դուք դեռ կարող եք իրավասու լինել ստանալու փոխարինման նպաստներ էլեկտրոնային գողության համար, որը տեղի է ունեցել 2022 թվ.-ի հոկտեմբերի 1-ից մինչև 2023 թվ.-ի նոյեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում: Դուք պետք է EBT 2259 ձևը ներկայացնեք վարչաշրջան ոչ ուշ, քան 2024 թվ.-ի փետրվարի 29-ը:

CalFresh-ի ահազանգ. 10/1/2022-ից - 11/30/2023-ն ընկած ժամանակահատվածում էլեկտրոնային եղանակով գողացված CalFresh նպաստների փոխհատուցում: Հաճախակի Տրվող Հարցեր

Թարմացվել է՝ 11/21/2023

8. **Ինչպե՞ս կարող եմ ստուգել իմ CalFresh նպաստների մնացորդը/բալանսը կամ գործարքների պատմությունը:**
   Մուտք գործեք՝ www.ebtedge.com կամ www.benefitscal.com կայքերը: Կարող եք նաև զանգահարել Ձեր EBT քարտի հետևի մասում նշված համարին՝ մնացորդի մասին տեղեկատվություն ստանալու համար կամ ստուգել Ձեր անդորրագիրը, երբ հաջորդ անգամ գնումներ կատարեք:

9. **Որտե՞ղ կարող եմ գտնել սննդի լրացուցիչ ռեսուրսներ իմ համայնքում:**
   Դուք կարող եք անվճար սնունդ ստանալ Ձեր տեղական սննդի պահեստներից: Կալիֆորնիայում կան սննդի պահեստներ, որոնք անվճար սնունդ են տրամադրում իրենց համայնքի բնակչությանը: Սննդի պահեստ գտնելու համար այցելեք հետևյալ կայքը՝ www.cafoodbanks.org/find-food/:

10. **Ինչպե՞ս կարող եմ ապագայում ինձ պաշտպանել էլեկտրոնային գողությունից:**
    Պահպանեք Ձեր EBT քարտը, հաշվի համարը, PIN-ը և զգուշացեք խանութներում կասկածելի սարքերից: Նկատի ունեցեք փոխել Ձեր PIN կոդը նպաստները ստանալուց մի քանի օր առաջ: Կարող եք նաև ներբեռնել ebtEdge հավելվածը, որը թույլ է տալիս «սառեցնել» Ձեր EBT քարտը և հեշտությամբ փոխել Ձեր PIN կոդը, ի թիվս այլ գործառույթների:

Էլեկտրոնային եղանակով գողացված CalFresh նպաստների փոխարինում

Թարմացվել է՝ 11/22/2023

Հետևյալ գծապատկերը ցույց է տալիս ժամանակահատվածը, որի ընթացքում ընտանիքները պետք է հայտ ներկայացնեն էլեկտրոնային եղանակով գողացված նպաստները փոխարինելու /հետ ստանալու համար, և վարչաշրջանները պետք է քայլեր ձեռնարկեն այդ նպաստները փոխահատուցելու համար:

Ընտանիքը հայտնում է, որ իրենց CalFresh նպաստները էլեկտրոնային եղանակով խարդախությամբ գողացել են...

Հոկտեմբեր 1, 2022-ից մինչև Նոյեմբեր 30, 2023 ժամանակահատված

ՀԵՏԱԴԱՐՁ ՊԱՀԱՆՋԻ

Վարչարջանը կփոխարինի քարտը, եթե վնասված քարտը դեռ չի փոխարինվել: **Վարչաշրջանը** տնային տնտեսություններին հանձնարարում է ներկայացնել EBT 2259 ձևը:

Ընտանիքը մինչև Փետրվար 29, 2024-ը պետք է ներկայացնի EBT 2259-ը իր հետադարձ պահանջի համար:

Վարչաշրջանը 30 աշխատանքային օր ունի EBT 2259-ի ստացման օրվանից՝ հայցը գործընթացի մեջ դնելու և հետադարձ փոխարինում տալու համար:

Դեկտեմբեր 1, 2023-ից հետո

ԸՆԹԱՑԻԿ ՊԱՀԱՆՋ

Վարչաշրջանն անմիջապես փոխարինում է վնասված քարտը, նույնիսկ եթե EBT 2259-ը դեռ չի ներկայացվել: **Վարչաշրջանը** հանձնարարում է ընտանիքին ներկայացնել EBT 2259 ձևը, անհրաժեշտության դեպքում:

Էլեկտրոնային գողության օրվանից **տնային տնտեսությունն** ունի 90 օրացուցային օր EBT 2259 ձևը ներկայացնելու համար:

Վարչաշրջանը 10 աշխատանքային օր ունի EBT 2259 ձևը ստանալու օրվանից՝ հայցը գործընթացի մեջ դնելու համար:

Վարչաշրջանը պետք է կատարի փոխարինման խնդրանքը՝ հիմնվելով հաջորդ էջում տրված ցուցումների վրա:

Եթե տնային տնտեսությանն արդեն տրվել է հաշվելի փոխարինումների առավելագույն թույլատրելի քանակը, փոխարինման հետագա հայտի հաստատումը պետք է հետաձգվի, մինչև **վարչաշրջանը** կարողանա ստուգել, որ պահանջվող փոխարինումը հաշվելի չէ:

Լրացուցիչ տեղեկությունների համար խնդրում ենք դիտարկել ACL 23-92 -ը:

Էլեկտրոնային եղանակով գողացված CalFresh նպաստների փոխարինում

Թարմացվել է՝ 11/22/2023

Հետևյալ գծապատկերն ուղղուեցույց է վարչաշրջաններին համար, թե ինչպես կարելի է որոշել, թե արդյոք փոխարինումը հաշվելի է և ինչպես տրամադրել փոխարինման նպաստներ տարբեր սցենարներում:

ՀԱՇՎԱՐԿԵԼԻ ՓՈԽԱՐԻՆՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՈՐՈՇՈՒՄ



Լրացուցիչ տեղեկությունների համար խնդրում ենք դիտարկել ACL 23-92 -ը: